ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 28.11.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 03/14

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.07.2014թ. N 73-1/617590-14 գրությունով «ՆՊԱՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-03/14 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-03/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 26.11.2014թ. եզրակացությունը պարզեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 09.07.2014թ. N 73-1/617590-14 գրությունով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնելով պաշտոնական ընթացակարգ «ՆՊԱՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու նպատակով:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 09.07.2014թ. N 73-1/617590-14 գրությամբ Կենտրոնին է ուղարկել Երևանի քաղաքապետարանի 02.07.2014թ. N 01/61-7195 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

2. «ՆՊԱՏ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 23.07.2014թ. N 09/032-1273 գրությամբ դիմել է «ՆՊԱՏ» ՍՊԸ-ին՝ խնդրելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.07.2014թ. N 73-1/617590-14 գրությունով պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի վերաբերյալ:

«ՆՊԱՏ» ՍՊԸ-ն 14.08.2014թ. N 08/14 գրությամբ հայտնել է, որ 2014թ. մայիսի 21-ին մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/99» ծածկագրով բաց ընթացակարգին: Օրենքով սահմանված կարգով Ընկերությունը ներկայացրել է բոլոր պահանջվող փաստաթղթերը: Ընթացակարգի արդյունքների ամփոփման վերաբերյալ ոչ մի ծանուցում չի ստացել: 2014թ. հունիսի 10-ին Ընկերությունը ստացել է գրություն Երևանի քաղաքապետարանի կողմից, որով տեղեկացվել է, որ «ՆՊԱՏ» ՍՊԸ-ի լիցենզիաները կասեցված են:

«ՆՊԱՏ» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ Ընկերության կողմից բոլոր տարիների համար մուծվել են լիցենզիաների համար նախատեսված պետական տուրքը:

2014թ. հունիսի 11-ին «ՆՊԱՏ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը այցելել է լիցենզավորման կենտրոն, որտեղ հայտնել են, որ պետական տուրքը ժամանակին չմուծելու պատճառով առաջացել են տույժեր և տուգանքներ, որի պատճառով լիցենզիան կասեցվել է: Այնուհետև Ընկերությունը կատարել է վճարումները, որի արդյունքում 2014թ. հունիսի 13-ից լիցենզիան վերականգնվել է:

«ՆՊԱՏ» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ ոչ մի դիտավորություն չի եղել և միայն նախորդ տարիներին աշխատանք չունենալը ստեղծել է ֆինանասական դժվարություններ, որի պատճառով «ՆՊԱՏ» ՍՊԸ-ն չի կարողացել լիզենզիայի համար վճարումները ժամանակին կատարել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «ՆՊԱՏ» ՍՊԸ-ն խնդրել է չներառել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

3. ՍՑ-ԳԲԽ-03/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին ներկայացրել է իր 26.11.2014թ. եզրակացությունը և առաջարկել է ՀՀ ֆինանսների նախարարության 09.07.2014թ. N 73-1/617590-14 գրությունով «ՆՊԱՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ «ՆՊԱՏ» ՍՊԸ-ին ընդգրկել ՀՀ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ Գնումների բողոքարկման խորհրդի կողմից որոշումը կայացնելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում «ՆՊԱՏ» ՍՊԸ-ի կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

4. ՍՑ-ԳԲԽ-03/14 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 09.07.2014թ. N 73-1/617590-14 գրությամբ «ՆՊԱՏ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 02.07.2014թ. ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված N 01/61-7195 գրությունը, «ՆՊԱՏ» ՍՊԸ-ի 14.08.2014թ. N 08/14 գրությունը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 26.11.2014թ. եզրակացությունը:

Երևանի քաղաքապետարանի Երևան քաղաքի Ասլամազյանի անվան երաժշտական դպրոցի, Ավան վարչական շրջանի թիվ 56, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի թիվ 161 մանկապարտեզների և Արաբկիր վարչական շրջանի թիվ 33 գրադարանի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/99» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

«ՆՊԱՏ» ՍՊԸ-ն «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/99» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով՝ հրավերի հավելված N 3-ով, ներկայացրել է բաց ընթացակարգի

հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություն, որով «ՆՊԱՏ» ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է, որ ունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1. մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը,
2. մասնագիտական փորձառություն,
3. տեխնիկական միջոցներ,
4. ֆինանսական միջոցներ,
5. աշխատանքային ռեսուրսներ:

Երևանի քաղաքապետարանը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 87-րդ կետը, 30.05.2014թ. N 01/61-5948 գրությամբ դիմել է ՀՀ քաղաքաշինության նախարարությանը՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն քաղաքաշինության բնագավառում գործող (տրամադրվող) համապատասխան լիցենզիայի (լիցենզիաների) տրամադրման, ինչպես նաև կասեցված լինելու վերաբերյալ (ըստ Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված համապատասխան ընկերությունների ցանկի):

Ի պատասխան Երևանի քաղաքապետարանի վերը նշված գրության՝ ՀՀ քաղաքաշինության նախարարությունը 04.06.2014թ. N 01/22.1/2608-14 գրությամբ հայտնել է, որ «ՆՊԱՏ» ՍՊԸ-ի ՀՀ քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզիանները 2012թ. օգոստոսի 26-ից մինչ օրս կասեցված են:

Այնուհետև Պատվիրատուն 17.06.2014թ. N 61/2764 գրությամբ «ՆՊԱՏ» ՍՊԸ-ին հայտնել է, որ անհրաժեշտ է սեղմ ժամկետներում վճարել «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/99» ծածկագրով բաց ընթացակարգի շրջանակներում ընկերության կողմից միակողմանի սահմանված հայտի ապահովումը՝ 353.085 (երեք հարյուր հիսուներեք հազար ութսունհինգ դրամ) ՀՀ դրամ:

Կենտրոնում՝ 29.08.2014թ. ժամը 15:00-ին կազմակերպված քննարկման ժամանակ, Ընկերության ներկայացուցիչը հաստատեց, որ «ՆՊԱՏ» ՍՊԸ-ի ՀՀ քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզիանները հայտը ներկայացնելու՝ 17.05.2014թ.-ի դրությամբ, կասեցված են եղել:

Այսինքն, «ՆՊԱՏ» ՍՊԸ-ն Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/99» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով

ներկայացրել է հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության վերաբերյալ, մինչդեռ վերոհիշյալ հայտարարությունը իրականությանը չի համապատասխանել, քանի որ «ՆՊԱՏ» ՍՊԸ-ի ՀՀ քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզիաները հայտը ներկայացնելու դրությամբ կասեցված են եղել, այսինքն՝ Ընկերությունը գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ, ինչը «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն հիմք է մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 149-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երեք տարի ժամկետով, եթե գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 09.07.2014թ. N 73-1/617590-14 գրությամբ «ՆՊԱՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ «ՆՊԱՏ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից որոշումը կայացնելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում «ՆՊԱՏ» ՍՊԸ-ի կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Արման Մնացականյան**

Անդամներ՝ **Սերայդարյան Հովհաննես**

Մխիթարյան Աննա